

## Սիրելի հայրենակիցներ,

Տարուայ մը վերջին ամիսը ընդհանրապէս կը յատկանշուի այն իրողութեամբ, որ մարդիկ, հաստատութիւններ եւ կառավարութիւններ հաշուեյարդար մը ընելով կը քննարկեն անցնող տարուան գործունէութիւնը եւ ըստ այնմ կը պատրաստուին գալիք տարուան համար ծրագրումներ կատարելու:



Երեսփոխանական Գրասենեակի աշխատանքները, կրնամ ըսել, յաջողութիւն արձանագրեցին ու պիտի շարունակեն իրենց սովորական ընթացքը, հակառակ նախարարութիւններու մէջ տիրող շարք մը պաշտօնեաներու, ինչպէս նաեւ օրէնքներու փոփոխութեան: Սակայն, շատ դժուար պիտի ըլլայ անցնող տարուան քաղաքական եւ տնտեսական կացութեան մասին դրական երկու խօսք ըսել, երբ այս պահուս մեր կղզին կ'ապրի այնպիսի անկիւնադարձային պահեր, որոնց շրջանցումը կը պահանջէ մեծ զոհողութիւններ:

Վերջին ամիսներու ընթացքին, Կիպրոսի կառավարութիւնը ակամայ դիմեց խիստ միջոցներու, երկրին տնտեսութիւնը փրկելու եւ արտաքին պարտքը 2.8 տոկոսէն վար պահելու միտումով: Կիպրոսի պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, զգալի թիւով հաստատութիւններ կը փակ-

լին եւ պաշտօնեաներ գործէ զերծ կը մնան: Անգործութիւնը արագ տարածուած կ'արձանագրէ, մեծ դժուարութիւններու դիմաց դնելով ընտանիքներ: Իսկ Կիպրական հարցի բարդ լուծումը, որ երբեմն յոյսի նշոյլներ ցոյց կու տար, կը գտնուի անելի դիմաց:

Վերոյիշեալ ստեղծուած խրթին պայմաններու լոյսին տակ գործելը, կը պահանջէ կամք, հաստատակամութիւն եւ լաւատեսութիւն: Մենք պիտի շարունակենք մեր աշխատանքը յուսալով, որ քանի մը տարիէն, կացութիւնը կը բարելաւուի եւ ամէն ինչ իր բնականոն հունին մէջ կը մտնէ:

2012-ի առաջին վեց ամսուայ ընթացքին, պիտի իրագործենք գաղութը, մանաւանդ երիտասարդութիւնը հետաքրքրող շարք մը սեմինար-դասախօսութիւններ, մասնագէտ անձերու օգնութեամբ: Այս դասախօսութիւններուն հիմնական նպատակը պիտի ըլլայ, բարելաւել մեր երիտասարդութեան ապագայի ասպարէզի կարելիութիւնները:

Այս հանգրուանին, կը փափաքիմ անդրադառնալ նաեւ շատ կարեւոր նախաձեռնութեան մը, որ Նարեկ Յայկական Վարժարաններու Հոգաբարձութեան հետ համագործակցաբար ծրագրած ենք: Լրջօրէն դիմած ենք հայապահպանման առնչութեամբ հաստատ քայլերու: Բոլոր քաղաքներու Կիպրահայութեան ցանկերը քննելով, ջանք պիտի տարուի մօտենալու հայ ընտանիքներու, քաջալերելու որ անոնք իրենց զաւակները օտար մանկապարտէզ կամ նախակրթարան ուղարկելու փոխարէն, արձանագրեն Նարեկ վարժարան: Այսպիսով, ծուլումէ փրկած կ'ըլլանք յաջորդող սերունդները, անոնց տալով բարձր մակարդակի ուսում՝ օժտուած հայեցի դաստիարակութեամբ:

Գալով մեր Գրասենեակի մշակութային տարեկան ձեռնարկին, «Լրատու»ի նախորդ թիւով փոխանցած էի, թէ երկրին անբարենպաստ պայմաններուն բերումով յետա-

ձգուած է 2012-ին: Հաճոյքն ունիմ փոխանցելու, թէ 11 Մարտ 2012-ին, Ստրովոլուսի Քաղաքապետարանի սրահէն ներս, տեղի պիտի ունենայ Գեղարուեստական անգուգական երեկոյ, մասնակցութեամբ հայրենի համբաւաւոր երգիչներու, երաժիշտներու եւ այլ արուեստագէտներու: Այս ձեւով, կը յուսամ թէ գոնէ մէկ գիշերուայ համար, կարելի պիտի ըլլայ թեթեւցնել ձեր առօրեայ մտահոգութիւնները, ձեզ փոխադրելով արուեստի աշխարհի, վայելելու անմոռանալի համոյթ մը: Ձեռնարկին մասին յաւելեալ մանրամասնութիւններ պիտի ստանաք Փետրուար ամսուայ ընթացքին:

Խօսքիս աւարտին յիշեմ, թէ Ուրբաթ, 6 Յունուար 2012-ին, Հայկական Ս. Ծնունդին առիթով, RIK1 հեռատեսիլի կայանէն, կ.ե. ժամը 4:00-ին, պիտի սփռուի «Հայերը Կիպրոսի մէջ» վաւերագրական ժապաւէնին յունարէն տարբերակը:

Սիրելիներ,

Շնորհաւորելով ձեր բոլորին Նոր Տարին եւ Ս. Ծնունդը, մաղթանքս է, որ միասնաբար թեւակոխենք Նոր Տարին յոյսով եւ նոր տեսլականներով: Թող 2012 թուականը ըլլայ առողջութեան, երջանկութեան եւ փափաքներու իրականացման տարի մը բոլորիս համար:

**Վարդգէս Մահտեսեան**

**Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ**

## ԵՌԱՄՍԵԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆ

2011-ի երկրորդ կիսամեային ետք, Կիպրոսի Հանրապետության դիմագրաւած տնտեսական զգալի անկումին ստեղծած իրավիճակը եւ անգործութեան թիւի աճը մեծ պարտաւորութիւններու դիմաց դրած է տեղական իշխանութիւնները: Պետութեան պարտքը կրճատելու միտումով առնուած խիստ քայլերը, սահմանափակումներ կը դնեն նոյնիսկ երկար տարիներ Կիպրոս օրինաւոր բնակութիւն հաստատած օտարահպատակներու կեցութեան: Անգործ մնալու պարագային, լրջօրէն կը վտանգուի անոնց Կիպրոս մնալու հաւանականութիւնը: Առաջնահերթութիւնը տալով Կիպրահպատակին եւ Եւրոպացի քաղաքացիին, աշխատանքային հրամանները նորոգելու եւ կամ նոր աշխատանք գտնելու հնարաւորութիւնը նուազագոյնի հասած է: Այս իրադարձութիւններու լոյսին տակ, Երեսփոխանական Գրասենեակ ներկայացող մեր հայրենակիցներուն, կը փորձենք առաւելագոյն չափով օգտակար հանդիսանալ եւ պէտք եղած միջամտութիւնները կատարել:

### Պաշտօնական մակարդակի հանդիպումներ

Երեքշաբթի, 11 Հոկտեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը հրաւիրուեցաւ աշխատանքային ծաշ-հանդիպում մը ունենալու Մամուլի եւ Տեղեկատուութեան Գրասենեակի (PIO) Տնօրէն Դոկտ. Էլիոնորա Ղափրիէլիտիսին եւ աւագ պատասխանատու Պրն. Միլթոս Միլթիատուին հետ: Հանդիպումի ընթացքին փոխանցուեցաւ, թէ Մամուլի եւ Տեղեկատուութեան Գրասենեակը կը նախաձեռնէ իւրաքանչիւր Կրօնական Փոքրամասնութեան պատմականը պարփակող՝ անհատական եւ քանի մը լեզուներով գրքոյկի մը հրատարակութեան, որ պիտի տրամադրուի Կիպրա-

կան Դեսպանատուներուն, դիւանագիտական ներկայացուցչութիւններուն եւ բոլոր փափաքողներուն:



Երկուշաբթի, 17 Յոկտեմբեր 2011-ին, Պրն. Սահտեսեան հանդիպում մը ունեցաւ Հանրապետութեան Ներքին Գործոց Նախարար Նեոկլիս Սիլիկիոտիսին հետ, մօտէն քննարկելու երկրին դիմագրաւած դժուարութիւնները եւ Կիպրոս բնակութիւն հաստատած պատկառելի թիւով մեր հայրենակիցներու ապագան: Զրոյցի ընթացքին, Պրն. Նախարարը տեղեակ պահեց Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչը կարգ մը խնդիրներու մասին, որ կը դիմագրաւէ Կիպրոսը եւ որ անպայմանօրէն իր ազդեցութիւնը պիտի ունենայ օտարահպատակ մեր հայրենակիցներուն կեցութեան առնչութեամբ: Ան նաեւ փոխանցեց, թէ նախարարութեան յատկացումները պիտի նուազին, յուսալով, որ յաջորդող տարիներուն տնտեսական պայմանները բարելաւում պիտի արձանագրեն: Հանդիպումի ընթացքին, Պրն. Սահտեսեան Նախարարին ուշադրութեան

յանձնեց նաեւ քաղաքացիութեան դիմում կատարած անհատներու ցանկ մը, որոնց դիմումները ուշացում արձանագրած են եւ խնդրեց անոնց ամենականուխ վերանայումը:



Նոյն օրը, Պետական Ներկայացուցիչը տեսակցութիւն մը ունեցաւ Ոստիկանութեան Պետ Սիխալիս Փափաեորդիուին եւ Ոստիկանութեան Պետի տեղակալ Անտրէաս Նիքոլաիտիսին հետ, մօտէն ծանօթանալու եւ Կիպրահայութեան հետ կապուած կարգ մը հարցեր քննարկելու նպատակով:

Երեքշաբթի, 1 Նոյեմբեր 2011ին, Պրն. Մահտեսեան հանդիպեցաւ Ստրովոլոսի Քաղաքապետ Պրն. Սավաս Իլիոֆոտուին հետ, Երեսփոխանական Գրասենեակի 11 Մարտ 2012-ի մշակութային ձեռնարկին հետ կապուած մանրամասնութիւններուն կապակցութեամբ:

Յինգշաբթի, 10 Նոյեմբեր 2011-ին, Կիպրահայ Յամայն-

քի Պետական Ներկայացուցիչը ծանոթացման հանդիպում մը ունեցաւ Զալէպի Վերապատուելի Սերոբ Մկրտիչեանին հետ, ներկայութեամբ Կիպրոսի Զայ Աւետարանչական Եկեղեցւոյ պատասխանատու Պրն. Զրայր Ճէպէճեանի:



Յինգշաբթի, 17 Նոյեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը մասնակցեցաւ եւ խօսք առաւ World Vision կազմակերպութեան նախաձեռնած «Safer Internet» խորհրդաժողովին, որ տեղի ունեցաւ Եւրոպական Զամալսարանին մէջ: Այս խորհրդաժողովին իրենց մասնակցութիւնը բերին Նարեկ Վարժարանի կարգ մը երէց աշակերտներ եւ տարբեր երկիրներու ներկայացուցիչներ, որոնց կողքին նաեւ Զայաստանի ներկայացուցիչը:

Երկուշաբթի, 12 Դեկտեմբեր 2011-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան եւ Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արքեպիսկոպոս, Սլովաքիոյի Դեսպան Ն.Վ. Աննա Թուրենիչովայի նախաձեռնութեամբ, հանդիպում մը ունեցան

UNDP-ACT-ի նորանշանակ պատասխանատու Պրն. Քրիստոֆըր Լուիզի եւ Յոյն ու Թուրք Կիպրացի քաղաքական կուսակցութիւններու ներկայացուցիչներուն հետ: Հանդիպումը տեղի ունեցաւ Վիքթորիա փողոցի վերանորոգուած Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ, հայապատկան եկեղեցին եւ յարակից կառոյցները ներկայացնելու եւ ծանօթացնելու նպատակով:

### Կիպրահայ գաղութի կեանքէն

Շաբաթ, 1 Հոկտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Գնդապետ Սամուէլ Ռամազեանի «Հայ-Յունական Ռազմական Առնչութիւններ» եւ Համագործակցութեան Պատմութիւն» հատորի գինեծօնին, որ տեղի ունեցաւ Առաջնորդարանի «Իւթիւճեան» սրահին մէջ, կազմակերպութեամբ Նոր Սերունդ Մշակութային Միութեան եւ հովանաւորութեամբ Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեանի:

Կիրակի, 23 Հոկտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան ՀՕՄ-ի Կիպրոսի «Սօսէ» մասնաճիւղի կազմակերպած Աշնանային ճաշին, որ տեղի ունեցաւ ՀՄԸՄ-ՀԵՄ-ի ակումբի սրահին մէջ:

Չորեքշաբթի, 9 Նոյեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Կիպրոսի Հայ Դատի Յանձնախումբի եւ Ազգային Առաջնորդարանի կազմակերպած միացեալ ձեռնարկին, «Արցախ, Հայաստան-Թուրքիա Արձանագրութիւններ» նիւթով, որ տեղի ունեցաւ «Իւթիւճեան» սրահին մէջ: Օրուան բանախօսն էր քաղաքական վերլուծաբան եւ թղթակից Պրն. Թաթուլ Յակոբեան: Դասախօսութեան յաջորդեց «Հայերը՝ Մռաւից Արաքս» ժապաւենի ցուցադրութիւնը:

Կիրակի, 20 Նոյեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուա-



ծածին Եկեղեցւոյ Անուանակոչութեան տօնին առիթով մատուցուած Ս. Պատարագին եւ մատաղի օրհնութեան արարողութեան:

Հինգշաբթի, 1 Դեկտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ 30-ամեակին նուիրուած հանդիսութեան, ներկայութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառին, որ տեղի ունեցաւ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ: Ելոյթ ունեցաւ Եկեղեցւոյ երգչախումբը, ղեկավարութեամբ Տիկին Նարա Սարտարեանի: Իսկ յաջորդ օրը, Պետական Ներկայացուցիչը եւ տիկինը ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի հանդէսին, ի պատիւ Արամ Վեհափառի Կիպրոս անպաշտօն այցելութեան:

Չորեքշաբթի, 7 Դեկտեմբեր 2011-ին, Պրն. Վարդգէս Մահտեսեան ներկայ գտնուեցաւ Տիկին Սիլվա Մաքամեանի «Silva's Angelic voices» ելոյթին, որ տեղի ունեցաւ Լառնաքայի Քաղաքապետարանի սրահին մէջ: Ելոյթին իր մասնակցութիւնը բերաւ նաեւ Սիլվայի որդին՝ Ալեքս Մոսկոֆեան: Ձեռնարկէն ետք, Պետական Ներկայացուցիչը անձամբ շնորհաւորեց Սիլվան, իր նախածեռնութեան եւ դրսեւորած բարձր կարողութիւններուն համար:

Չորեքշաբթի, 14 Դեկտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ ներկայ գտնուեցան Ազգային Առաջնորդարանի եւ Համազգայինի «Օջական» մասնաճիւղի կազմակերպած միացեալ ձեռնարկին, որ տեղի ունեցաւ «Իւթիւճեան» սրահին մէջ: Օրուան բանախօսն էր Երուանդ Խաչատրեան, նիւթ ունենալով «Հայրենի ժամանակակից Գրականութիւնը եւ Մամուլը»:

Երեքշաբթի, 20 Դեկտեմբեր 2011-ին, Պետական Ներկայացուցիչը ու իր տիկինը, ներկայ գտնուեցան Կոյրերու դպրոցին մէջ տեղի ունեցած Կաղանդի հանդէսին:

Չորեքշաբթի, 21 Դեկտեմբեր 2011-ին, Պրն. Մահտես-

եանն ու տիկինը, ներկայ գտնուեցան Նիկոսիոյ Նարեկ Վարժարանի Նախակրթարանի եւ Միջնակարգի Կաղանդի հանդէսին, որ տեղի ունեցաւ դպրոցի նորակառոյց մարզասրահէն ներս:

Կիրակի, 25 Դեկտեմբեր 2011-ին, Պրն. Մահտեսեան եւ տիկինը ներկայ գտնուեցան Լառնաքայի Ս. Ստեփանոս Եկեղեցւոյ Անուանակոչութեան արարողութեան եւ մատաղի օրհնութեան: Այս առիթով տեղի ունեցաւ նաեւ Հայաստանէն յատկապէս բերուած Խաչքարի օծում, նուիրուած Տէր եւ Տիկին Միհրան եւ Ժագլին Պոյաճեաններու կողմէ, որ զետեղուեցաւ եկեղեցւոյ մուտքին: Պետական ներկայացուցիչը անձամբ շնորհաւորեց Պոյաճեանները այս գեղեցիկ նախաձեռնութեան առիթով:

Կիրակի, 25 Դեկտեմբեր 2011-ի երեկոյեան, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, յատկապէս հրաւիրուելով, ներկայ գտնուեցան Հ.Ե.Ս.-ի տարեկան պարահանդէսին, որ տեղի ունեցաւ Նիկոսիոյ «Lemon Park»-ին մէջ:

### Շնորհաւորագիր

Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, 17 Հոկտեմբեր 2011 թուակիր նամակով մը, շնորհաւորեց Պրն. Արման Կիրակոսեանը, որ ՀՀ Նախագահի 11.10.2011 հրամանագիրով, նշանակուեցաւ Աւստրիոյ, Հունգարիոյ եւ Սլովաքիոյ արտակարգ եւ լիազօր դեսպան: Պետական Ներկայացուցիչը անոր մաղթեց յաջողութիւն եւ յարատեւ վերելք, լաւագոյն կերպով կատարելու ստանձնած առաքելութիւնը:

Կիրակի, 30 Հոկտեմբեր 2011-ին, Հայաստանի Պատկերասփիւռի «Հ1» կայանէն, արբանեակային կապով ելոյթ ունեցաւ Կիպրահայ Համայնքի Պետական Ներկայացուցիչ Պրն. Վարդգէս Մահտեսեան, իր շնորհաւորութիւնները փոխանցելով «Արեւներ» մանկապատանեկան համոյթի

հյուրաբանչիւր անդամին եւ յատկապէս Արմէն եւ Արփինէ Տիվանեաններուն, անոնց գործունէութեան 30-ամեակի առիթով:

Պրն. Մահտեսեան, 14 Դեկտեմբեր 2011 թուակիր գիրով մը, շնորհաւորեց Պրն. Յարութ Թահնագեանը, որ 9 Դեկտեմբեր 2011-ին, Հայաստանի մէջ կայացած ժողովին վերընտրուած էր Համահայկական Խաղերու Համաշխարհային Կոմիտէի Գործադիր Մարմինի անդամ:

### Այցելութիւն «Գալայճեան» Հանգստեան Տուն



Շաբաթ, 24 Դեկտեմբեր 2011-ին, Տէր եւ Տիկին Վարդգէս Մահտեսեաններ, ընկերակցութեամբ Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Վարուժան Արք. Հերկելեանի, այցելեցին «Գալայճեան» Հանգստեան Տուն եւ Ամանորեայ ու Ս. Ծննդեան լաւագոյն մաղթանքներով եւ անհատական նուէրներով պատուեցին տարեց հայրերն ու մայրերը:

## «Նանոր» Մանկապատանեկան Պարախումբ



Շաբաթ, 24 Դեկտեմբեր 2011-ին, Նարեկի նորակառույց մարզասրահին մեջ, Հայ Արուեստի դպրոցի պարախումբի փոքրիկները, որոնք յետայսու «Նանոր» Մանկապատանեկան Պարախումբ անունով պիտի ճանչցուին, հերթական իրենց փորձեն ետք, Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդի առիթով պզտիկ հաւաքոյթ մը ունեցան: Անոնք հաճելի պահեր անցուցին ներկայութեամբ Պետական Ներկայացուցիչին ու իր ազնիւ տիկնոջ, ծնողներու եւ բարեկամներու: Պրն. Մահտեսեան խօսք առնելով, շնորհակալութիւն յայտնեց փոքրիկներուն անոնց հետեւողական մասնակցութեան համար, իսկ ծնողներուն ու պարուսոյց Պրն. Ֆելիքս Յարութիւնեանին՝ զոհողութեան համար: Այս տարուայ կադանդէքի կողքին, փոքրիկներուն վերապահուած էր անակնկալ մը: Պետական Ներկայացուցիչը պարախումբին անունով գեղեցիկ T-shirt-ներ նուիրեց խումբի անդամներուն:



## Ծանոթանանք Կիպրոսի Հանրապետության Օրենքներուն

Կիպրոսի Խորհրդարանի 14.12.2011  
Լիազուճար նիստը վաւերացուց ֆինանսական  
կրճատումներուն օրինագիծերը

Կը փափաքինք ձեզ տեղեակ պահել այն գլխաւոր կէտե-  
րուն մասին, որոնց գծով կրճատումներ պիտի ունենան՝ ըստ  
Կիպրոսի Խորհրդարանի 14.12.2011 թուականի Լիազուճար  
նիստին հաստատած օրինագիծերուն.-

### 1. Երեխաներու եւ ուսանողական նպաստներ

Ընտանիքի մը եկամուտը եւ ունեցուածքը նկատի պիտի  
առնուին երեխաներու եւ ուսանողական նպաստի վճարում-  
ներուն ժամանակ: 2012-ի Երեխաներու նպաստ եւ 2011-  
2012 ուսանողական կրթական տարեշրջանի նպաստ շա-  
րունակել ստանալու համար, նոր դիմում պէտք է ներկա-  
յացուի 1 Յունուար 2012-էն սկսեալ: Վերոյիշեալներուն  
գծով, իւրաքանչիւր տարուայ համար նոր դիմումներ կը  
պահանջուին:

### 2. Աւելցուած Արժէքի Տուրքի (VAT) յաւելում

Աւելցուած Արժէքի Տուրքի յաւելում 15%-էն 17%-ի, որ օ-

րենքի ուժ պիտի ստանայ 1 Մարտ 2012-էն:

3. Կառավարական պաշտօնեաներու ամսականի սառնեցում

2012 եւ 2013 տարիներուն համար յաւելումի սառնեցում՝ կառավարական պաշտօնատարներու, պաշտօնեաներու, թոշակառուներու, քաղաքապետական պաշտօնեաներու, ինչպէս նաեւ կիսակառավարական պաշտօնեաներու:

4. Անձնական հատուածի (Private sector) պատկանող պաշտօնեաներու ներդրում

Արտակարգ տուրք ըստ ամսականի՝ անձնական գործ ունեցողներու, գործատէրերու, պաշտօնեաներու եւ թոշակառուներու, որոնց զբաղմունքը անձնական հատուածին կը պատկանի: Մասնակցութեան գումարը հաւասարապէս պիտի բաժնուի գործատիրոջ եւ գործաւորին միջեւ: Մինչեւ €2.500 ամսական՝ զերօ տուրք, €2.500-€3.500 ամսականի՝ 2.5% տուրք, €3.501-€4.500 ամսականի՝ 3% տուրք, իսկ €4.500-էն վեր ամսականի՝ 3.5% տուրք:

5. Հանրապետութեան պաշտպանութեան սնտուկի արտակարգ տուրքի յաւելում՝ ըստ ընկերութիւններու շահաբաժինին

Պաշտպանութեան սնտուկի արտակարգ տուրքի յաւելում 17%-էն 20%-ի, 2012 եւ 2013 տարիներուն համար ըստ՝ ընկերութեան շահաբաժինին (dividends):

6. Տուրքերու վճարում VISA-ով JCC Smart System-ի միջոցով

Յետայսու, կարելի պիտի ըլլայ նոր տուրքերու վճարումները (ոչ-յետմեալ) կատարել JCC Smart System-ի ճամբով, հետեւեալ կայքէջին միջոցաւ <https://www.jccsmart.com>

# Գեղարուեստական Անգուղական Երեկոյ

Երգ, Երաժշտութիւն, Պար

Մասնակցութեամբ՝

Արմէն Պապախանեանի  
Յակոբ Զաղացպանեանի  
Աննա Մայիլեանի  
Անուշ եւ Ինկա Արշակեան քոյրերու  
Արմէն Հիւսնունցի  
Ծիւան Գասպարեանի Jr.

եւ

«Սիփան» Պարախումբի

Տեղի պիտի ունենայ  
Կիրակի, 11 Մարտ 2012,  
երեկոյեան ժամը 7:00-ին,  
Ստրովոլոսի Քաղաքապետարանի սրահին մէջ

## Վարդգես եւ Մակի Մահտեսեաններ

Կը շնորհաւորեն Կիպրահայուութիւնը  
եւ մեր հայրենակիցները  
Նոր Տարուայ եւ Ս. Ծնունդին առիթով,  
մաղթելով արեւշատութիւն եւ  
երջանկութիւն,  
իսկ մեր զոյգ հայրենիքներուն՝  
բարգաւաճում ու վերելք

### ԿԻՊՐԱՅԱՅ ԶԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

#### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
Ել. Յասցէ office@armenianmp.com  
Ոստայնէջ՝ <http://www.armenianmp.com>

#### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
Ել. Յասցէ vmahdessian@parliament.cy